ՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՈԿՏՐԻՆԸ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՀԵՆՔՈՒՄ*

Նորիկ Նորիկյան

Բանալի բառեր՝ անվտանգություն, փոխգործակցություն, պաշտպանական բարեփոխումներ, քաղաքական երկխոսություն, ռազմավարություն, տարածաշրջան, քաղաքականություն, երկրի պաշտպանություն:

Յուրաքանչյուր պետության ռազմական դոկտրինը որևէ մեկի կողմից հնարված չէ, այլ ձևավորվում է օբյեկտիվորեն, արտաքին և ներքին քաղաքական և տնտեսական գործոնների ամբողջ հանրագումարից, աշխարհագրական դիրքից, երկրի իրական հնարավորություններից, իսկ գլխավորը՝ նրա անվտանգային քաղաքականությունից: Հայաստանի, ինչպես և ցանկացած այլ պետության ռազմական քաղաքականությունը ունի երկու՝ միմյանց հետ շաղկապված կողմեր՝ արտաքին և ներքին: Եթե արտաքին կողմը դիտարկում է միջպետական հարաբերություններում ռազմական ուժի գործադրման խնդիրները, ապա ներքին կողմը սահմանագծում է երկրի պաշտպանունակության պահպանման և զինված ուժերը՝ գործադրման համար պատրաստ վիճակում պահելու ուղղությամբ պետության ամենօրյա գործունեությունն ու հեռանկարները[1]:

Ժամանակակից զարգացումների համատեքստում հարց է առաջանում, թե ինչու է անհրաժեշտ ռազմական դոկտրինն առանձնացնել որպես ինքնուրույն կատեգորիա, եթե կան ռազմական տեսությունը և ռազմական գիտությունը: Հարկ է ընդգծել, որ ռազմական գիտությունը ներառում է գոյություն ունեցող բոլոր ռազմատեսական հայացքները, որոնք կարող են լինել ոչ միայն տարբեր, այլև նույնիսկ հակադիր: Սակայն, հնարավոր չէ մեծ բազմազանության դեպքում նրանց նպատակաուղղված ազդեցությունը պաշտպանության կազմակերպման, զինված ուժերի շինարարության ու նախապատրաստության վրա: Պրակտիկայում գոյություն ունեցող հայացքների ամբողջ բազմազանությունից հարկավոր է լինում ընտրել առավել նպատակահարմարները, որոնք համապատասխանում են պետության քաղաքական նպատակներին և տնտեսական հնարավորություններին: Այստեղից էլ ծագում է պետության ռազմական դոկտրինի գոյության անհրաժեշտությունը, որը չի հանդիսանում գիտելիքների, իմացության մի ճյուղ, այլ ներառում է հիմնական, պաշտոնապես ընդունված և պետության մարմինների ու հաստատությունների համար ղեկավար դեր կատարող ռազմատեսական հայացքները:

Ռազմական քաղաքականության կանխատեսական (պրոգնոստիկ) կողմը բացահայտում է այն պատերազմների և ռազմական բախումների բնույթը, որոնց մեջ ներգրավվում է տվյալ պետությունը, ի հայտ է բերում պետությունների միջև հակասությունների առկայությունը և դրանց լուծման հնարավոր բնույթը, ռազմական հնարավոր վտանգի աղբյուրները: Այս համատեքստում կարևոր է նաև գնահատել ռազմաքաղաքական իրադրությունը առանձին տարածաշրջանում և ամբողջ աշխարհում, ճշտել կոնկրետ ռազմական սպառնալիքի առկայությունը և բնույթը տվյալ պետության համար, ինչպես նաև որոշել պետության հնարավորությունները պատերազմի կանխման առումով և այդ պատերազմը վարելու համար: Կանխատեսման գործառույթը վերաբերում է պատերազմների և ռազմական բախումների սոցիալական, քաղաքական,

* Հոդվածն ընդունվել է 05.03.21:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ք.գ.դ., պրոֆեսոր Տ. Քոչարյանը: 10.03.21:

տնտեսական, բնապահպանական և այլ հետևանքներին, հայեցակարգային մակարդակում որոշվում կամ սահմանվում է զինված ուժերի անհրաժեշտության և կարիքի պահանջմունքը, ինչպես նաև պետության ռազմական անհրաժեշտ պատրաստությունն ազգային անվտանգության ապահովման համար[2]:

Ընդհանրապես, ռազմական դոկտրինը մշակելիս բավական շատ դժվարություններ են առաջանում այն պատճառով, որ միանման մոտեցում չկա հենց «ռազմական դոկտրին» հասկացության ըմբռնման նկատմամբ: Այստեղ գլխավոր «կռվախնձորն» է այն, որ ոչ բոլորն են ճանաչում նման կատեգորիայի գոյության օրինաչափությունը: Նման հասկացությունից հրաժարվելու անհրաժեշտությունն առաջ են քաշում հիմնականում ամերիկյան, արևմտյան մտածողության կողմնակիցները՝ պատճառաբանելով, որ Արևմուտքում «ռազմական դոկտրին» տերմինը գործածվում է առավել լայն իմաստով, որն ընդգրկում է ցանկացած ռազմատեսական դրույթներ, դիրքորոշումներ, սահմանումներ ու հայացքներ, օրինակ՝ «Տրումենի դոկտրինը»[3]: Այդ միտքը հաստատելու համար նշվում է, թե արդի ժամանակաշրջանում ԱՄՆ-ն ունի ոչ թե ռազմական դոկտրին, այլ «ԱՄՆ-ի ազգային ռազմական ստրատեգիա»[4], ՆԱՏՕ-ն համապատասխանաբար ունի «ՆԱՏՕ-ի նոր ռազմավարական հայեցակարգ»[5]:

Ռազմական դոկտրինի մեթոդաբանական հիմունքները դիտարկելիս կարելի է առանձնացնել մի շարք ասպեկտներ.

Առաջին ասպեկտը կապված է այն հանգամանքի հետ, որ ժամանակակից ռազմական գիտությունը դեռ լիովին չի հրաժարվել ռազմական դոկտրինը որպես պատմական կատեգորիա դիտարկելուց: Այս պարագայում հիմնական ուշադրությունը դարձվել է, նախ և առաջ, ռազմական դոկտրինի բովանդակությունը (դրա զարգացման տարբեր փուլերում) հետազոտելուն: Հետազոտողների տեսադաշտում այդ դեպքում անփոփոխ են ռազմական շինարարության և զինված պայքարի հիմնախնդիրները, պատերազմի վարման քաղաքական և ռազմական-ռազմավարական նպատակները, պատերազմի բնույթը և նրա վարման եղանակները, պետության նախապատրաստումը պատերազմին, զինված ուժերի շինարարությունը, ՀՈՒ-ի տեխնիկական հագեցումը և ռազմական կրթությունը, ռազմական գործողությունների վարման եղանակները և նմանատիպ այլ հարցեր[6]:

Երկրորդ ասպեկտի համաձայն՝ գիտական առումով ռազմական դոկտրինը հենվում է ռազմաքաղաքական և ռազմատեսական գիտելիքների ամբողջ համակարգի, այլ ոչ թե միայն ռազմական գիտության վրա: Գործնական մասով ռազմական դոկտրինը ելնում է քաղաքականության կոնկրետ դրույթներից, քաղաքական և ռազմական ղեկավարության որոշումներից: Բայց, ինչպես ցույց է տալիս պատմական փորձը, ռազմական դոկտրինները չեն կարող պարզապես հռչակվել կամ պարտադրվել: Դրանք պետք է ճշտորեն, խտացված կերպով արտահայտեն ժամանակակից փուլում ռազմական գործի ոգին և իմաստը, խորապես թափանցեն հասարակայնության և զինված ուժերի գիտակցության մեջ, ներքուստ ընդունվեն ռազմական կադրերի կողմից:

Ըստ երրորդ ասպեկտի՝ միասնական ռազմական դոկտրինում ընդունված է տարբերել քաղաքական և ռազմատեխնիկական կողմերը: Քաղաքականությունը առաջատար դեր է խաղում ռազմատեխնիկական կողմի նկատմամբ: Հասարակության մեջ օբյեկտիվորեն անհրաժեշտություն է առաջանում այս կամ այն կերպով իր վերաբերմունքն արտահայտել պաշտպանական հիմնախնդիրների քաղաքական ասպեկտների նկատմամբ: Առաջին հերթին դա վերաբերում է պատերազմին և դրա կանխման եղանակներին, ռազմական սպառնալիքի ենթադրվող բնույթին առնչվող հայացքներին, երկրի պաշտպանության քաղաքական նպատակներին ու խնդիրներին և այլն: Իրենց մեջ ներառելով ռազմական քաղաքականության այս տարրերը՝ այդ դրույթները տեղ են գտնում ռազմական դոկտրինում: Եվ, վերջապես, պատերազմն ինչ բնույթ էլ ընդունի (գլոբալ կամ տեղային), ինչ միջոցներ էլ օգտագործվեն (օրինակ՝ սովորական,

միջուկային), միևնույն է՝ պատերազմը մնում է քաղաքականության շարունակությունը, բայց ռազմական միջոցների օգնությամբ, անկախ նրանից՝ ինչ աստիճանով ծեռք կբերվեն դրված քաղաքական նպատակները: Ուստի, ռազմական դոկտրինի քաղաքական բաղադրիչը միշտ իր տեղը կունենա:

Չորրորդ ասպեկտը վերբերում է ռազմական սպառնալիքներին՝ որպես ռազմական դոկտրինի մշակման կարևորագույն դրույթի: Ռազմական բախումներն ու պատերազմներն առաջանում են այն պատճառով, որ մի պետության ազգային շահերը հակասության մեջ են մտնում այլ պետության կամ պետությունների ազգային շահերի հետ: Պատմական փորձը և ժամանակակից կյանքը ցույց են տալիս, որ քաղաքականության ասպարեզից դեռևս հնարավոր չէ բացառել ուժի կիրառումը:

Հինգերորդ ասպեկտը: Ռազմական դոկտրինի էությունը և բովանդակությունը, բնականաբար, անփոփոխ չի մնում: Ռազմական դոկտրինի սահմանումը, որոշումը պետք է սեղմ տարբերակով, ինչպես նաև կյանքում տեղի ունեցող փոփոխությունների հաշվառմամբ արտացոլի դրա էությունն ու ուղղվածությունը, ինչպես նաև պետության վերաբերմունքը պատերազմի նկատմամբ, մոտեցումները երկրի անվտանգության և պաշտպանության ապահովմանը՝ իհարկե, հասարակական-պետական կարգի բնույթին և ներքին ու արտաքին քաղաքականության նպատակներին համապատասխան:

Համընդհանուր մոտեցմամբ, ընդունված է համարվում ռազմական դոկտրինայի այն սահմանումը, որում արտացոլվում է՝ ա) պատերազմի կանխման, բ) պաշտպանական շինարարության, գ) պետական համակարգի և դրա զինված ուժերի՝ երկրի պաշտպանության համար նախապատրաստման, դ) զինված պայքարի նախապատրաստման ու վարման եղանակների վերաբերյալ պաշտոնապես ընդունված հայացքների համակարգը[7]:

Վեցերորդ ասպեկտը: Ռազմական դոկտրինը պետք է շարադրվի ոչ թե մեկ փաստաթղթով, այլ արտահայտվի մի շարք փաստաթղթերում: Ռազմական դոկտրինում, սովորաբար, արտացոլվում է փաստաթղթերի չորս խումբ. ա) ռազմաքաղաքական դրույթները, բ) իրավական հիմնախնդիրները, գ) զինված ուժերի կիրառման հարցերը ռազմական ժամանակաշրջանում, դ) զինված ուժերի կենսագործունեության հարցերը խաղաղ ժամանակաշրջանում:

Առաջին խմբի հիմնական փաստաթուղթը պետք է համարել ռազմաքաղաքական տիպի որևէ հռչակագիր: Հայաստանի դեպքում դրա դերը, կարելի է ասել, կատարում է 1990թ. օգոստոսի 23-ի ՀՀ Անկախության Հռչակագիրը[8]: Այդպիսի փաստաթղթերը պետք է դիտարկի և ընդունի պետության կամ պետությունների ռազմաքաղաքական դաշնախմբի բարձրագույն ղեկավարությունը: Որոշակի իմաստով առաջին խմբին են դասվում, օրինակ, 2008թ. ընդունված «Պաշտպանական ռազմավարության վերանայում. 2011-2015թթ.» փաստաթուղթը[9], ինչպես նաև 2007թ.[10] ու 2020թ.[11] ընդունված ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունները: Փաստաթղթերի երկրորդ խումբը՝ իրավականը, ներառում է պաշտպանության, անվտանգության, զինվորական-ծառայողական գործունեությանն ուղղված հարաբերությունների կարգավորման օրենսդրական ակտերը: Փաստաթղթերի երրորդ խումբը պատերազմի ժամանակ զինված ուժերի կիրառման հիմունքներն են: Դրանք արտացոլվում են օպերացիաների նախապատրաստման և վարման հիմունքներում, մարտական կանոնադրություններում: Չորրորդ խումբն այն փաստաթղթերն են, որոնք կանոնակարգում են զինված ուժերի կյանքն ու գործունեությունը խաղաղ ժամանակ: Դրանք համազորային կանոնադրություններն են, երկարաժամկետ հրահանգները, ուղեցույցները, հրամանները և այլն:

Այս համատեքստում հարկ է ընդգծել, որ 2007 թվականին ընդունված և մինչ նոր դոկտրինի ընդունումը որոշակիորեն դեռևս իր կիրառական նշանակությունը պահպանող ՀՀ ռազմական դոկտրինն ունի պաշտպանողական բնույթ: Այն նպատակաուղղ-

ված է Հայաստանի ազգային անվտանգության հիմնարար արժեքների հետևողական պաշտպանությանը, ռազմական անվտանգության համակարգի հնարավորություններին, ինչպես նաև փոխգործակցության ընդլայնման միջոցով ռազմական անվտանգության ապահովմանը, տարածաշրջանում խաղաղության և կայունության ամրապնդմանը[12]:

Ռազմական դոկտրինի մեթոդաբանական հիմունքները ենթադրում են պետության ղեկավարության կողմից դոկտրինի մշակման և ընդունման կառուցակարգի հստակեցում: Ռազմական քաղաքագետների կողմից պետության ռազմական քաղաքականության վերլուծության հիման վրա ձևակերպվել են պետության ռազմական դոկտրինի ձևավորման մի շարք սկզբունքներ: Դիտարկենք դրանցից հիմնական երեքը:

Առաջինը կոչվում է ռազմական առաջնահերթության (պրիորիտետի) սկզբունք: Այստեղ առաջին պլան են մղվում ռազմավարության պահանջմունքները: Պետությունը գիտակցաբար գնում է սոցիալական ոլորտում սահմանափակումների՝ իր գործունեությունը ենթարկելով պատերազմի նախապատրաստմանը: Նման մեթոդը բնութագրական էր նացիստական Գերմանիայի համար և մասամբ օգտագործվեց ԽՍՀՄ-ում և Չինաստանի ժողովրդական Հանրապետությունում: Մասնավորապես գերմանական «Երրորդ Ռայխը», Ճիշտ է, սկզբում կարողացավ բավական արագորեն իրեն ենթարկել գրեթե ամբողջ Եվրոպան՝ բացառությամբ Անգլիայի, բայց, ի վերջո, չկարողացավ դիմանալ Անգլիային օգնության հասած ԱՄՆ-ի, ինչպես նաև Գերմանիայի դեմ պատերազմի մեջ մտած ԽՍՀՄ-ի կազմած անգլո-ամերիկա-խորհրդային ռազմաքաղաքական դաշնախմբի դեմ ռազմատնտեսական դիմակայությանը և պարտություն կրեց Երկրորդ Աշխարհամարտում (1939-1945թթ.):

Ինչ վերաբերում է ԽՍՀՄ-ին, ապա այդ բազմազգ կայսրությունը այնքան հյուծեց իր տնտեսությունը ՆԱՏՕ-ի երկրների, հատկապես՝ ԱՄՆ-ի հետ մղվող սպառազինությունների մրցավազքում, որ իրական սպառնալիք ծագեց ԽՍՀՄ-ի՝ որպես մեծ տերության գոյության համար: Ի վերջո, այդ ամենը ավարտվեց ԽՍՀՄ-ի փլուզմամբ և նրա միջուկը հանդիսացող Ռուսաստանից մյուս բոլոր 14 միութենական հանրապետությունների անջատմամբ (1990-1991թթ.): Չինաստանի ժողովրդական Հանրապետությունը նույնպես առաջնորդվում էր այս սկզբունքով, սակայն ժամանակին գիտակցելով այդպիսի քաղաքական ընթացքի կործանարարությունը՝ կտրուկ փոխեց քաղաքականության ուղղվածությունը: Այս համատեքստում հարկ է նշել, որ Չինաստանի քաղաքագետները, սոցիոլոգները, տնտեսագետները, հետախույզները, մշակութաբանները և բոլոր մյուս համապատասխան ոլորտների մասնագետները մանրազնին, պատկերավոր կերպով ասած՝ «խոշորացույցներով» ուսումնասիրում էին կործանված ԽՍՀՄ-ի «դիակը»՝ ըմբռնելու համար այդ վիթխարի քաղաքական համակարգի կործանման պատճառը: Հենց ԽՍՀՄ-ի փլուզումն էլ դարձավ այն ազդանշանը, որը սկիզբ դրեց Չինաստանի քաղաքական և տնտեսական շրջադարձին: Իսկ չին քաղաքագետների կողմից սոցիալիզմի հզորագույն երկրի կործանման պատճառների ուսումնասիրությունը հնարավորություն տվեց խուսափելու ԽՍՀՄ-ին վրա հասած քաղաքական աղետի կրկնությունից:

Հայկական ռազմաքաղաքական մտքի պատմության տեսանկյունից ուշագրավ է այն հանգամանքը, որ, փաստորեն, հայկական ազգային ռազմական դոկտրին ստեղծելու փորձ է արվել դեռևս 1930թ.՝ Լեռնահայաստանի սպարապետի՝ Գ.Նժդեհի կողմից գրված «Յիշիր պատերազմը» հոդվածաշարով: Այն ունի 1930-ական թվականների հայկական ռազմական դոկտրինի կամ նույնիսկ ազգային անվտանգության ռազմավարության արժեք: Ավելին, Նժդեհի հեղինակած այդ փաստաթուղթը ուներ համապարփակ կառուցվածք և բաղկացած էր հետևյալ մասերից. Յիշիր պատերազմը (Ներածություն), 1-ին մաս, Կայ մարդը՝ կայ պատերազմը (պատերազմի հավերժակա-

նության մասին), 2-րդ մաս, Չխրատուող ժողովուրդը (պատմության դասերը սերտելու անհրաժեշտության մասին), 3-րդ մաս, Ռազմարուեստ (ճակատամարտի հոգեբանական կողմը), 4-րդ մաս, Ցեղային ինքնաճանաչողութիւն (ազգային ինքնագիտակցության կարևորությունը), 5-րդ մաս, Ցեղային բարոյականը, 6-րդ մաս, Հայ զէնքի անյաջողութեան պատճառները, 7-րդ մաս, Քաղաքական գերագոյն իմաստութիւնը, և 8-րդ մաս, Նոր Հայը[13]:

Երկրորդ սկզբունքը վերաբերում է պաշտպանական կարիքների բավարարման ուղղությանը, որի էությունը հետևյալն է. պետությունն իր ռազմական հզորությունը պահում է այն մակարդակի վրա, որն ապահովում է (հնարավոր ագրեսիայի դեպքում) հակառակորդին այնպիսի վնասի հասցնում, որն անհամատեղելի է ծագած կոնֆլիկտի ռազմական լուծումից հակառակորդի ստանալիք օգուտի հետ: Ռազմական դոկտրինի ձևավորման նկատմամբ նման մոտեցումը առավել ընդունելի է արդի պայմաններում (ինչի վառ օրինակը հանդիսացավ նաև 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբերի 44-օրյա պատերազմը Արցախում), երբ համաշխարհային մասշտաբով ռազմական բախման իրական սպառնալիքը բավական նվազել է: Պետք է հատկապես մեծ ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ այս սկզբունքը կարող են կիրառել գլխավորապես այնպիսի երկրները, որոնք տիրապետում են զգալի ռազմական ներուժի և ընդունակ են պատերազմի սկսվելուն պես կարճ ժամկետներում զորահավաքել իրենց բոլոր անհրաժեշտ ուժերը՝ ռազմական ռազմավարության պահանջներն ապահովելու համար:

Երրորդը, այսպես կոչված, «հավասարակշռման կամ սահմանափակված ինքնիշխանության» սկզբունքն է: Պետությունը հարկադրված սահմանափակում է ռազմական ոլորտում իր ազգային շահերը և գործունեությունը՝ նպատակ ունենալով առավելագույն ռեսուրսներ հատկացնել իր կենսագործունեության այլ՝ տվյալ ժամանակաշրջանի համար առաջնահերթ ոլորտների ուղղությունների զարգացմանը: Նման մոտեցման դեպքում տվյալ պետության արտաքին քաղաքականությունը, որպես կանոն, հենվում է այդ պետության հզոր դաշնակցի վրա: Բնականաբար, դրա դիմաց տվյալ պետությունն իր հզոր դաշնակցին «վճարում է» սեփական ինքնիշխանության մասնակի կորստով: Նման իրավիճակը բնութագրական է նաև Հայաստանի համար և հետպատերազմյան տարածաշրջանային նոր զարգացումները պահանջելու են ՀՀ ազգային անվտանգության և հատկապես՝ռազմական անվտանգության առաջնահերթություններ ի ու դրանից բխող ռազմավարական ուղղությունների վերանայումներ:

Պետության ռազմական դոկտրինի մշակման տրամաբանական «սխեման» վերոհիշյալ մոտեցումների հաշվառմամբ կարող է հետևյալ հաջորդականությունն ունենալ: Զարգացման հայեցակարգը որոշում է ներքին և արտաքին քաղաքականության մեջ պետության հիմնական առաջնահերթությունները և դրանց հետ կապված կենսականորեն կարևոր և այլ շահերը: Անվտանգության հայեցակարգը հաշվառում է կենսագործունեության տարբեր ոլորտներում պետության շահերի նկատմամբ սպառնալիքները և նախանշում է այն ուղիները, որոնցով կարելի է չեզոքացնել այդ սպառնալիքները քաղաքական, տնտեսական, ռազմական և այլ միջոցներով, ինչպես նաև հաշվի առնելով առկա հնարավորությունները՝ որոշում է պետության ռազմական քաղաքականության ուղղվածությունը: Ձևավորվում է պետության ռազմական անվտանգության հայեցակարգը՝ որպես ազգային անվտանգության հայեցակարգի բաղադրիչ մասը, որը դառնում է ռազմական դոկտրինի հիմքը:

Պետաիշխանական մարմինները, որոնք պատասխանատու են կամ մասնակցում են պետության ռազմական անվտանգության երաշխավորմանը, ելնելով իրենց առաջադրվող նպատակներից, «մանրամասնում են» պետության ռազմական անվտանգության հայեցակարգի առանձին դրույթները, որոնք վերաբերում են իրենց գործունեության ոլորտին: Պետության ռազմական քաղաքականության և ռազմական անվ-

տանգության ապահովումը չի կարող իրականացվել միայն պաշտպանության ոլորտի կառավարական մարմնի ուժերով: Այն ամբողջ ծավալով կարող է համակարգել համապատասխան լիազորություններ, լծակներ ու հեղինակություն ունեցող մարմինը՝ անվտանգության խորհուրդը[14], ինչը նախատեսված է նաև «Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին» ՀՀ օրենքով՝ որպես երկրի պաշտպանական քաղաքականության մշակման համար պատասխանատու մարմնի հիմնական գործառույթ[15]: Իսկ ռազմական անվտանգության միասնական համակարգի վերածված և համաձայնեցված ուղեցույցները, ղեկավար դրույթները, հրահանգները, որոնք արդեն անցել են փորձագիտական գնահատումը և հաստատվել են իշխանության համապատասխան մարմինների կողմից սովորաբար կազմում են պետության ռազմական դոկտրինի բովանդակությունը:

Ռազմական քաղաքագիտության մեջ արդարացիորեն տեսակետ է ներկայացվում, որ խոշոր պետությունների, հատկապես՝ միջուկային զինանոց ունեցող հզոր երկրների համար այսօր ռազմական դոկտրինների ձևավորման վրա մեծապես ազդում են աշխարհում տեղի ունեցող ընդհանուր փոփոխությունները: Այդ ամենը հանգեցնում է նրան, որ սկսվում են փոխվել այդ հայեցակարգային փաստաթղթերի գլխավոր, քաղաքական ասպեկտները: Արդիական ռազմական դոկտրիններում արդեն դիտարկվում են հետևյալ հարցերը.

1) ոչ թե ինչ ուժային միջոցներով հասնել դրված նպատակներին, այլ թե ինչպես անհնարին դարձնել այդպիսի միջոցների օգտագործումը,

2) ոչ թե ինչ նպատակներ է հետապնդում պատերազմը, այլ թե ինչպիսի նպատակների չի կարող հասնել պատերազմը և ռազմական ուժի կիրառումը,

3) ոչ թե ինչ ձևով վարել պետության և զինված ուժերի նախապատրաստումը պատերազմին, այլ թե ինչ ձևով թույլ չտալ այդ պատերազմը,

4) և վերջապես՝ ոչ թե ինչպիսի եղանակներ ու միջոցներ մշակել մարտական գործողությունների արդյունավետ վարման համար, այլ թե ինչ միջոցներ փորձել կրճատել կամ բացառել պետության զինանոցից:

Այլ խոսքով՝ աշխարհում կատարվող փոփոխությունները պետք է հանգեցնեն ռազմական դոկտրինների հասկացության փոփոխությանը, որի նպատակը պետք է դառնա իր իսկ բացասումը, այսինքն՝ ոչ թե ռազմական միջոցներ՝ քաղաքական նպատակներին հասնելու համար, այլ քաղաքական միջոցներ՝ միասնական մարդկային նպատակի ապահովման համար, այն է՝ հենց իր իսկ՝ մարդկության գոյատևման համար:

Նման փոփոխությունների նշանակությունն ընդգծվում է այն իրողությամբ, որ այսօր զինված պայքարի նորագույն տեխնոլոգիաներ ու պատերազմի վարման եղանակներ են զարգացվում և ի հայտ են գալիս նորերը, այդ թվում՝ մարտական ռոբոտները, տիեզերական սպառազինությունը, անօդաչու թռչող սարքերը, լազերային սպառազինությունը, «գենետիկական» զենքը, «սեյսմիկ» և «օդերևութաբանական» պատերազմները, «ցանցային», ինտերնետային համացանցային, տեղեկատվական պատերազմները և այլն:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Քոչարյան Տ.Տ., Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովումը ազգային անվտանգության համատեքստում, Երևան, 2012, էջ 154:
2. Տե՛ս Барабин В.В., Военно-политическая деятельность государства в системе национальной безопасности. - М., 1997, стр. 56-60.

3. War Power Resolution of 1973.-In War Power Resolution. Hearings Before the Committee on Foreign Relations United States Senate.95 th Congress. Washington US GRO,1977.-P.213-218.
4. National Security Strategy Archive, Improving Transparency in National Security Decision Making, https://nssarchive.us/; Donald L. Westerfield. War Powers: The President, the Congress, and The Question of War. Westport: Praeger, 1996. p. 127.
5. NATO adopts new Strategic Concept, Lisbon, 19 November 2010, https://www.nato.int/strategic-concept/
6. Дорохов Н.И., Становление системы военно-доктринальных взглядов в СССР (1920-е - начало 1930-х гг.), https://paul-atrydes.livejournal.com/74560.html.
7. Իսկ ահա 2007թ. դեկտեմբերի 25-ին ուժի մեջ մտած ՀՀ ռազմական դոկտրինի տեքստում ռազմական դոկտրինը սահմանվում է որպես Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովման ռազմաքաղաքական, ռազմական-ռազմավարական, ռազմատնտեսական և ռազմատեխնիկական հիմունքները ներառող պաշտոնական հայեցակետերի համախումբն է: Տե՛ս ՀՀ Նախագահի 2007 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը հաստատելու մասին» թիվ ՆՀ-308-Ն հրամանագիրը, ՀՀ ՊՏ 2008/1, 07.01.2008, http://www.arlis.am.
8. Հռչակագիր Հայաստանի անկախության, ընդունված 1990թ. օգոստոսի 23-ին, ՀՀ ԳԽՏ 1990/16, http://www.arlis.am.
9. ՀՀ Պաշտպանության ռազմավարական վերանայում, ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնական կայք, http://www.mil.am/hy/68/230/266:
10. ՀՀ Նախագահի 2007 թվականի փետրվարի 7-ի «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» թիվ ՆՀ-37-Ն հրամանագիր, ՀՀ ՊՏ 2007.02.15/11, 07.02.2007, http://www.arlis.am:
11. ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարություն. դիմակայուն Հայաստան փոփոխվող աշխարհում, Հուլիս 2020թ., Ռազմավարությունը ամբողջությամբ հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://bit.ly/3gNrfKa.
12. ՀՀ Նախագահի 2007 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը հաստատելու մասին» թիվ ՆՀ-308-Ն հրամանագիր, ՀՀ ՊՏ 2008/1, 07.01.2008, http://www.arlis.am.
13. Տե՛ս Գ. Նժդեհ, Յիշիր պատերազմը: Հրատարակիչ՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն: Երևան, 2016:
14. Конституционно-правовой статус Совета Безопасности Российской Федерации, Учебное пособие, Под общей редакцией докт. юрид. наук Н.П.Патрушева, М., 2009, стр. 11.
15. «Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին» ՀՀ օրենք, 2-րդ հոդված, ՀՀ ՊՏ 2018.03.21/20 (1378), 07.03.2018, http://www.arlis.am:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Պետության ռազմական դոկտրինը ռազմական անվտանգության երաշխավորման հենքում

Նորիկ Նորիկյան

Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովումը պետության կարևորագույն ու նպատակային գործառույթներից է և ներառում է սպառնալիքների ժամանակին վերհանումը, գնահատումը, դրանց զարգացման կանխատեսու-

մը, կանխումը, կասեցումը և չեզոքացումը: Հայաստանի պաշտպանական անվտանգությունն ապահովվում է նրա տրամադրության տակ եղած բոլոր ուժերի, միջոցների ու ռեսուրսների համընդհանուր և ամբողջական կիրառմամբ: Հիշյալ անվտանգության ապահովման նպատակով կիրառվում է պետության պաշտպանական համակարգը՝ պետության ամբողջ ներուժի (քաղաքական, տնտեսական, ռազմական և այլն) համադրմամբ ու նպատակաուղղված ղեկավարմամբ: Այդ համադրման հիմնական կարևոր ուղիներից են նաև պետության պաշտպանական ներուժի զարգացումը, պաշտպանական համակարգի ու զինված ուժերի բարեփոխումները, որոնք միտված են երկրի պաշտպանունակության ամրապնդմանը, զինված ուժերի մարտունակության բարձրացմանը և ժողովրդավարության պահանջներին համապատասխանեցմանը:

РЕЗЮМЕ

Военная доктрина государства в основе гарантирования системы военной безопастности

Норик Норикян

Ключевые слова: безопасность, взаимосотрудничество, оборонные реформы, политический диалог, стратегия, регион, политика, защита страны.

Обеспечение военной безопасности Республики Армения – одно из важнейших функций государства, которое включает своевременное выявление угроз, оценивание и прогнозирование их развития, их предотвращение, приостановление и нейтрализацию. Обеспечение военной безопасности Республики Армения осуществляется путем комбинированного использования всех сил, средств и ресурсов, имеющихся в ее распоряжении. Для этой цели применяют оборонительную систему государства путем сочетания и целенаправленного руководства всего потенциала государства (политического, экономического, военного и других областях). Одним из важных способов данного сочетания является также развитие оборонительного потенциала государства, реформы вооруженных сил и оборонной системы, направленных на укрепление обороны страны, повышение боевой готовности вооруженных сил и соответствие требованиям демократии.

SUMMARY

Military Doctrine of the State Based on the Guarantee of the Military Security System

Norik Norikyan

Keywords: security, cooperation, defense improvements, political dialog, strategy, region, policy, country defense.

The military security insurance of the Republic of Armenia is one of the key functions of the state and it includes the in-time rising of threats, their evaluation, development prediction, prevention, inhibition and neutralisation. Defense security of the Republic of Armenia is ensured through the collective and complete usage of all forces, means and recourses at its disposal. For the purpose of the mentioned security insurance the state’s defense system is put into use in combination with the whole potential (political, economic, military and other fields) and aimed leadership of the state. Basic ways of that combination as well are: development of the state’s defense potential, reformation of the defense system and Armed Forces, aimed at the country’s defense capability maintenance, AF efficiency enforcement and meeting the democracy requisites.